ՄԿՐՏԻՉ ՆԵՐՍԻՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԻ

ՄԵԼՔՈՆՅԱՆ Է. Վ.

Թուրքական պաշտոնական պատմագրությունը, դեռևս վաղուց կեղծելով իրական փաստերը, ծուռ հայելու մեջ է ներկայացրել թե՛ օսմանյան կայսրության և թե՛ նրա տիրապետության տակ գտնվող ժողովուրդների պատմությանը վերաբերող հարցերը: Թուրք կեղծարարները փորձում են, միջազգային հանրությանը խաբելով, թաքցնել օսմանյան կայսրության իսկական դեմքը և ստեղծել մի առասպել, ըստ որի՝ իբր թուրքերը նպաստել են համաշխարհային մշակույթի զարգացմանը, թուրք սուլթանները քաղաքակրթություն են տարածել և կարգ ու կանոն հաստատել իրենց նվաճած երկրներում: Դեռ ավելին, 1943 թ. թուրքական Պատմագիտական ընկերության նիստում շատ պատմաբաններ իրենց «հեղինակավոր» կարծիքն են հայտնել, թե իբր «թուրքերն են վառել համաշխարհային մշակույթի առաջին ջահերը»[1]:

Պատմության թուրք կեղծարարները փորձել և փորձում են նենգափոխել հայ ազգային-ազատագրական շարժման պատմությունը ևս: Իր բազմաթիվ ուսումնասիրություններում, հոդվածներում և հրապարակային ելույթներում ակադեմիկոս Մ. Ներսիսյանը հետևողականորեն քողազերծել է նրանց: Անհերքելի են գիտականի փաստարկումները ժողովուրդներին ստրկացման և տառապալի շահագործման ենթարկելու գործում օսմանյան պետության վարած դաժան քաղաքականության վերաբերյալ: Ուստի և արխիվային փաստաթղթերին խորագիտակ պատմաբանը քննադատում է այն գործիչներին, որոնք, ջուր լցնելով թուրքական պատմագրության ջրաղացին, ջանացել են ստվերել հայ ազգային-ազատագրական շարժումը, Հայոց ցեղասպանության հարցում մեղավոր են ճանաչել արևմտահայությանը, հայ կամավորական ջոկատների ի հայտ գալը չարիք են համարել արևմտահայության համար և այլն:

Մ. Ներսիսյանը վճռականորեն մերժում է թուրք կեղծարարների «տեսակետները», որոնք հաշվի չեն նստում ո՛չ փաստերի և ո՛չ էլ ճշմարտության հետ: Մի շարք թուրք պատմաբաններ՝ Մ. Քյոփրուլյուն, Թ. Գյոքբիլգին, Հ. Օրկունը, Շ. Ալթընդաղը, Յ. Հ. Բայուրը, Ա. Յալչընը, Գ. Կայմուրանը, Է. Ուրասը, Ս. Քոչաշը, Ա. Յամանը, Է. Քարալը, Բ. Շիմշիրը և ուրիշներ, ստահոդ պնդումներով լի հատուկ աշխատություններ են նվիրել

---

[1] ***Զուլալյան Մ.,*** *Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ, Ե., 1995, էջ 8, տե՛ս նաև* ***Ներսիսյան Մ.****, Պատմության կեղծարարները, Ե., 1998, էջ 8,* ***նույնի****՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Ե., 2005, էջ 25:*

արևմտահայության պատմությանը, Հայկական հարցին ու հայ ազատագրական շարժմանը: Նրանք, ձայնակցելով մեկը մյուսին, փորձել են փառաբանել իրենց պետության պատմությունը՝ գրելով, թե իբր այդ պետության մեջ ժողովուրդներն ապրել են անհոգ ու բարեկեցիկ կյանքով, օգտվել բոլոր իրավունքներից և ոչ մի պատճառ չեն ունեցել պայքարելու օսմանյան պետության դեմ: Նշենք, որ եվրոպական երկրների մի շարք արևելագետներ և պատմաբաններ կրկնել են այդ աղավաղումները:

Մ. Ներսիսյանը անվերապահորեն հերքում է թուրք կեղծարարների հակագիտական պնդումները: «Օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին» հոդվածում[2] նա բազում փաստերով հիմնավորել է այն իրողությունը, որ Թուրքիան այն երկիրը չէր, որ կարողանար օրինականություն հաստատել նվաճված երկրներում: Դա հորինված մի առասպել է, որի նպատակն է արյունարբու սուլթաններին ներկայացնել որպես արդարամիտ ու օրինապահ միապետներ, իսկ նրանց զավթողական նվաճումները համարել առաջադիմական: Մ. Ներսիսյանը, վկայակոչելով պատմաբան Վ. Գորյանովին, իրավացիորեն նշում է, որ այդ կեղծարարները նույնիսկ փորձում են թուրք սուլթաններին, այդ թվում նաև բյուզանդական պետությունը կործանող Մեհմեդ 2-րդին, պատկերել որպես առաջադեմ գործիչներ[3]:

Իրականությունն այն է, սակայն, որ Թուրքիան մի հետամնաց երկիր էր, որը մշտապես խոչընդոտել է իր տիրապետության տակ գտնվող ժողովուրդների զարգացմանը, հարատևորեն իրագործել բարբարոսություններ ու վայրագություններ:

Մ. Ներսիսյանը քողազերծում է Թուրքիայի՝ որպես քաղաքակրթության «ջահակրի» սին առասպելը: Տոգորված պանթուրքական և պանիսլամական գաղափարներով՝ թուրքական կառավարող շրջանները և պատմության կեղծարարներն իզուր են գովերգում այն պայմանները, որոնցում ապրում էին իրենց տիրապետության տակ գտնվող ժողովուրդները: Ինչպես կարող էր ապահով ու հանգիստ պայմաններում ապրող արևմտահայությունը տասնյակ հազարներով լքել իր հայրենիքը և կամ պայքարի դուրս գալ: Հայ ժողովրդի դահիճներից մեկը՝ Ջեմալ փաշան, հայտարարել է, որ հայերը չեն ենթարկվել ճնշման ու հալածանքի, ավելի լավ և ապահով վիճակում էին, քան մյուս

---

[2] Հայաստանի ազգային արխիվ /այսուհետև՝ ՀԱԱ/, ֆ. 818, ց. 1, գ. 13, 15, տե՛ս նաև **Ներսիսյան Մ.,** Պատմության կեղծարարները, էջ 7-57, **նույնի**՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 24-84, **նույնի**՝ Օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին [Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1997, № 2, էջ 41-58, 1998, № 1-2, էջ 27-44]:

[3] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 754, թ. 6, տե՛ս նաև **Ներսիսյան Մ.,** Պատմության կեղծարարները, էջ 8, **նույնի**՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 25-26:

ժողովուրդները[4]: Մ. Ներսիսյանի հավաստմամբ, այս մերկապարանոց խոսքերի ենթատեքստում թաքնված է այն հրեշավոր սուտը, թե իբր արևմտահայության ազգային-ազատագրական շարժումը սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմքեր չի ունեցել և հրահրվել է օտար պետությունների և հայ հայրենասերներից կազմված «կոմիտեների» կողմից:

Արևմտյան մի շարք պատմաբաններ կրկնում են թուրք հեղինակներին՝ «հավատալով» իրենց հորինած «հեքիաթին»: Մ. Ներսիսյանն այդ ամենի հիմքում իրավացիորեն տեսնում է քաղաքական նկատառումներ: Իբրև հիմնավորում իր եզրակացության՝ նա նշում է Թուրքիայի պատմությանը նվիրված՝ 1976-1977 թթ. Քեմբրիջի համալսարանի հրատարակությամբ լույս տեսած երկու ծավալուն հատորներ, որոնց հեղինակները՝ Ս. Շոուն և Ե. Շոուն, փառաբանում են օսմանյան կայսրության կարգերը, ճգնում ցույց տալ, թե արյունարբու սուլթանները իբր մեղմ էին ու հանդուրժող իրենց հպատակ ժողովուրդների նկատմամբ, և որ հայերը իբր դժգոհ չեն եղել իրենց վիճակից: Եթե անգամ այն վատթարացել է, մեղավորը թուրքերին մեծ վնաս հասցրած «կոմիտեներն» են եղել[5]:

Մ. Ներսիսյանի համոզմամբ, նույն մոտեցումն ունի ամերիկացի հեղինակ, ծագումով թուրք Ք. Կարպատը, որը միտումնավոր կրճատում է հայերի թիվը Արևմտյան Հայաստանում (XIX դ.)[6]: Իհարկե, թուրք պատմաբանները կարող են շարունակ կրկնել նմանատիպ «տեսակետները», որոնք հեռու լինելով իրականությունից՝ բազմիցս մերժվել են պատմագիտության կողմից: Ըստ նրանց՝ ազգային-ազատագրական շարժումներ չեն եղել, արևմտահայերն իրենց օրինական իրավունքների համար չեն պայքարել: Դեռ ավելին, պատմության կեղծարարները շատ հեռու են գնում՝ ազատագրական պայքարը որակելով որպես դավադրություն: Ապահով վիճակում գտնվող, լայն արտոնություններից օգտվող, չճնշված ու չհալածվող արևմտահայությունը ինչու՞ պետք է ծառս լիներ «գթասիրտ» սուլթանների դեմ: Արևմտահայության պայքարը ո՛չ «ապերախտություն» էր և ո՛չ էլ «դավադրություն»: «Դա մի ամբողջ ժողովրդի ինքնաբուխ շարժում էր, համաժողովրդական պայքար, իր կյանքը, պատիվը, գույքը, իր ազգային

---

[4] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ.114, թ. 201, տե՛ս նաև **Ներսիսյան Մ.**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Ե., 2002, էջ 309:

[5] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 89, գ. 777, թ. 53, **Ներսիսյան Մ.**, Պատմության կեղծարարները, էջ 73-74:

[6] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 114, թ. 202, **Ներսիսյան Մ.**, Պատմության կեղծարարները, էջ 74, **նույնի**՝ Հայ ազգային-ազատագրական շարժումը օսմանյան բռնապետության դեմ և պատմության կեղծարարները (ՊԲՀ, 1984, № 3, էջ 18):

անկախությունը, ազատությունը պահպանելու համար»,- նշում է Մ. Ներսիսյանը[7]:

Համամիտ լինելով Մ. Ներսիսյանի այս եզրահանգումներին՝ ավելացնենք, որ ոչ մի երկիր, ոչ մի «կոմիտե» չէր կարող մի ամբողջ ժողովրդի պարտադրված պայքարի հրահրել: Այսպես կվարվեր սեփական հայրենիքում, թուրքական յաթաղանի տակ դարեր շարունակ հալածվող ու կեղեքվող ամեն մի ժողովուրդ՝ իր դարավոր լուծը թոթափելու ակնկալությամբ:

Թուրքական քաղաքական միտքը ևս միտված էր հօգուտ բռնակալության, ամեն կերպ գունազարդելու օսմանյան մռայլ պատմությունն ու իրականությունը:

Լուսաբանելով հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը՝ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը խոսքն ուղղում է պատմության կեղծարարներին, որոնք փառաբանում են օսմանյան կայսրության մեջ XIX դ. II կեսին հանդես եկած «ազատամիտ» շարժումը՝ «նոր օսմաններին»: Ովքե՞ր են նրանք, և ո՞րն է նրանց, այսպես կոչված, «ճշմարտությունը»: Նրանք թուրք մտավորականության ներկայացուցիչներ էին, որոնք տոգորված էին մեծապետական ազգայնամոլությամբ՝ հավատարիմ իրենց ազգային հոգեկերտվածքին: Նրանք հանդես էին գալիս Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազատագրական շարժման դեմ, ավելին, վերջիններիս թուրքացնելու միջոցով ցանկանում էին պահպանել երկրի ամբողջականությունը: Նրանք առաջ քաշեցին արտառոց մի տեսություն, ըստ որի՝ օսմանյան կայսրությունում իրավիճակը բարվոք էր, ժողովուրդները համերաշխ էին, և ազատագրական շարժումների համար չեն եղել նպաստավոր պայմաններ, որ դրանք «շինծու» էին, «անօրինական», նույնիսկ պահանջում էին, որ հպատակ ժողովուրդներն իրենց համարեն սուլթանին ենթակա օսմանցիներ, ինչ կրոնի և ազգության էլ որ պատկանեին:

Մ. Ներսիսյանի համոզմամբ, խեղաթյուրելով իրերի իսկական վիճակը, «նոր օսմանները» քարոզել են այն տեսակետը, թե Հայկական հարցը ստեղծվել է Թուրքիայի թշնամիների կողմից, որ հնարավոր չէ նման հարցի գոյությունը, որովհետև հայերը Թուրքիայում ապրում էին ապահով, բարեկեցիկ կյանքով[8]: Պատմաբանը վկայակոչում է նրանց ղեկավար անդամներից մեկի՝ Ալի Սուավիի գրքույկը, որը լույս է տեսել Եվրոպայում 1875 թ.: Հեղինակը, խոսելով Հերցեգովինայի խնդրի և Արևելյան հարցի մասին, ինչին և նվիրված էր գրքույկը, հանգել է այն եզրակացության, որ ազգային-ազատագրական պայքար չի եղել, իսկ տեղի ունեցած փոքր

---

[7] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 91, **Ներսիսյան Մ.**, Պատմության կեղծարարները, էջ 75:

[8] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 274, թ. 18, **Ներսիսյան Մ.**, Հայկական հարցի ծագումը և մեծ տերությունները (ՊԲՀ, 1999, № 1, էջ 106):

խռովությունները դրսի ուժերի մեքենայությունների արդյունք են[9]: Հայերի և մյուս ժողովուրդների ազատագրական պայքարի ժխտումը Մ. Ներսիսյանը համարում է օսմանիզմի հիմնական դրույթներից մեկը և հանգում այն եզրակացության, որ այդ դրույթները ձևավորվել են դեռևս 1850-1860-ական թվականներին: Այդ գաղափարախոսությամբ տոգորված մեծ վեզիր Ալի փաշան պնդում էր, որ կայսրության հպատակ ժողովուրդների՝ միմյանց նկատմամբ ունեցած ատելությունը կարող է կանխել թուրքական տարրը և հավասարակշռություն ստեղծել նրանց փոխհարաբերություններում[10]:

Օսմանիզմի մյուս ջատագովը՝ Ֆուադ փաշան, խոստովանելով անկախության ձգտող հպատակ ժողովուրդների տրամադրությունները, գտնում էր, որ դրանք, միևնույն է, հեռանկար չունեն և ինչպես բալկանյան, այնպես էլ հայ ժողովրդի ազատագրական պայքարը դատապարտված է ձախողման[11]:

Մեծ վեզիր Միդհատ փաշան, չնայած կողմնակից էր սահմանադրական կարգերին, բայց վճռականորեն պայքարում էր նվաճված ժողովուրդների ազգային անկախ զարգացումը կանխելու համար և օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցող շարժումները փորձում էր բացատրել օտար պետությունների գործակալների հրահրումներով[12]: Նույն կարծիքին էր սուլթան Աբդուլ Համիդը՝ կարծելով, թե «հայկական շարժում չկա, այլ մի խումբ դրսից եկած խառնակիչներ են, որ խռովում են իմ հպատակներին»[13]: Ավելին, Մ.Ներսիսյանի հավաստմամբ, օսմանյան կայսրությունը գովերգելու, գոյություն ունեցող հասարակական-քաղաքական կարգերը քաղաքակիրթ ներկայացնելու, այնտեղ ապրող ժողովուրդների կյանքը, գույքը և պատիվն ապահովված ներկայացնելու գաղափարն է արտահայտում քեմալականների օժանդակությամբ 1930-ական թվականներին հրապարակված «Թարիհ» («Պատմություն») բազմահատորյակը: Դրանով առավել լայն ծավալ ստացավ պատմության աղավաղումը Թուրքիայում: Այն մի ներբող է՝ ձոնված Թուրքիային. դա ուներ իր նպատակը՝ կյանքի կոչել թուրքական ազգայնամոլությունն իր կամակատար գրչակների օգնությամբ[14]: Ըստ Մ. Ներսիսյանի՝ այդ պաշտոնական «պատմագրությունը» ժխտում է օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցած զանգվածային կոտորածների ու ցեղասպանության իրողությունը: «Այս ոգով գրվել և այսօր էլ գրվում են բազմաթիվ ու բազմատեսակ աշխատություններ,- գրում է նա,- որոնց նպատակն է համոզել ընթերցողին, թե հայերի կոտորածներ չեն եղել ո՛չ 1894-1896, ո՛չ 1909 և հետո,

---

[9] *ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ.114, թ. 199,* ***Ներսիսյան Մ.,*** *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 307:*

[10] *ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 114, թ. 203,* ***Ներսիսյան Մ.****, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 308:*

[11] *ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 114, թ. 203,* ***Ներսիսյան Մ.,*** *նշվ. աշխ., էջ 308:*

[12] ***Նույն տեղում:***

[13] *Նույն տեղում:*

[14] *ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 24,* ***Ներսիսյան Մ.****, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 309:*

ընդսմին, վճռականորեն ժխտվում է հատկապես հայերի ցեղասպանությունը 1915-1923 թթ.: Պաշտոնական այդ հրատարակության բացարձակ շինծու տեսակետները ստացան ղեկավար գաղափարախոսական ցուցմունքների ուժ: Ազգայնական-պանթուրքիստական գաղափարներով հանդես եկան նոր անուններ...»[15]: Նրանք նույնությամբ կրկնում են արդեն հայտնի առասպելը՝ Թուրքիայում հայերի ապահով լինելու մասին:

Մ. Ներսիսյանը վկայակոչում է պատմաբան Յ. Բայուրին: Սա, կեղծելով իրական փաստերը, «Թրքական հեղափոխության պատմությունը» աշխատության մեջ փորձել է «ծաղկուն» վիճակում ներկայացնել արևմտահայությանը, նրան արտոնված իրավունքները, խաղաղ ու գոհ կյանքը՝ նշելով, որ եթե տեղի են ունեցել որոշ ելույթներ, ապա միայն Ռուսաստանի և Անգլիայի դրդմամբ, որոնք թշնամաբար էին տրամադրված Թուրքիայի նկատմամբ: Ավելին, նա գտնում էր, որ հայերը թուրքական ռասայի մի ճյուղն են կազմում[16]: Նույն միտքն է հայտնել նաև Է. Ուրասը «Հայերը պատմության մեջ և Հայկական հարցը» գրքում[17], որտեղ նա խեղաթյուրել է հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը և չարամտորեն զրպարտել հայ ժողովրդին: Է. Ուրասը գրում է, թե իբր հայերը, սահմանադրությունից օգտվելով և ազատության շնորհներ ստանալով, իրենց քայքայիչ գործունեությամբ աղետ են բերել կայսրությանը՝ խռովելով նրա խաղաղությունը[18]: «Այստեղ Է. Ուրասը մի վերապահում է անում,- գրում է Մ. Ներսիսյանը,- ճիշտ է, արդեն ընդհանրացնող կեղծիք պարունակող վերապահում, թե, իբր, այդ խռովությունը սերմանել են ժողովրդից կտրված գործիչները, իսկ ինքը՝ ժողովուրդը, չի համակրել ազատագրական շարժումները՝ առավել խելացի համարելով թուրքական ծառայության մեջ գտնվող հայ պաշտոնյաների լոյալությունը»[19]: Մ. Ներսիսյանի համոզմամբ, գիտական անբարեխղճությունը հեղինակին հնարավորություն է տվել, հավատարիմ իր ազգայնամոլությանը, դարձյալ կրկնել այն առասպելը, թե իբր հայերը «օսմանյան պայծառ, վառվռուն ու հեքիաթային աշխարհում» ունեցել են բարեկեցիկ կյանք: Նա ջանում է ցույց տալ, որ հայ ժողովուրդը պետականություն չի ունեցել և միշտ գտնվել է այլ պետությունների տիրապետության տակ[20]:

Է. Ուրասն այնքան է հեռանում պատմական ճշմարտությունից, որ ժխտում է նույնիսկ արևմտահայության զանգվածային կոտորածներն ու

---

[15] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 114, թ. 204, **Ներսիսյան Մ.,** Հայ ժողովրդի ազատագրական պայքարը..., էջ 309:

[16] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 115, թ. 81, **Ներսիսյան Մ.**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը..., էջ 309-310:

[17] **Uras Esat**. *Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950.*

[18] Նույն տեղում, էջ 177:

[19] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 253, թ. 65, գ. 773, թ. 17, **Ներսիսյան Մ.**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը..., էջ 311:

[20] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 253, թ. 64, գ. 773, թ. 15:

ցեղասպանությունը, դրանց վերաբերյալ գոյություն ունեցող փաստերն ու հսկայածավալ գրականությունը համարում է միտումնավոր ու հնարովի: Այդ կապակցությամբ Մ. Ներսիսյանը դիպուկ նկատում է, որ կեղծիքների այս վարպետը վկայակոչել է արևմտյան թուրքամետ հեղինակներին, սակայն ակնհայտ կողմնակալությամբ շրջանցել է բարեխիղճ հեղինակների՝ Ջ. Բրայսի, Ա. Թոյնբիի, Էմ. Դիլլոնի, Ֆ. Գրինի, Հ. Մորգենթաուի և այլոց ճշմարտացի երկերը, որովհետև դրանք փաստում են թալանի, մշտական հալածանքների և կոտորածների ենթարկված հայերի դրությունն Օսմանյան Թուրքիայում: Նույն կերպ պանթուրքական այս հեղինակը չտեսնելու է տալիս թուրք պատմագիրներ Ի. Փեչևիի, Նաիմայի և այլոց պերճախոս վկայությունները ոչ թուրք ժողովուրդների հանդեպ օսմանյան պետության վարած բարբարոսական քաղաքականության մասին: «Դրա փոխարեն նա ստեղծում է Օսմանյան Թուրքիայի երևութական լայնախոհության ստապատիր պատկերը, քարոզելով, թե, իբր, օսմանյան պետությունը անգերազանցելի է մնացել դավանանքի ազատությունը հարգելու հարցում»,- նկատում է Մ. Ներսիսյանը[21]:

Մ. Ներսիսյանը հավաստում է, որ Է. Ուրասի և մյուսների «հակագիտական ու հակապատմական մտամարզանքները» քննադատել է անգլիացի անվանի պատմաբան Քր. Ուոքերը. «Ինչպես ցույց է տալիս Քր. Ուոքերը, Է. Ուրասը բացահայտ միտումնավորությամբ աղավաղել ու կեղծել է հայոց պատմության իրական փաստերը: Միաժամանակ, նա մերկացնում է Ուրասի այն սնամեջ պնդումները, թե Հայաստանը զուտ աշխարհագրական հիշողություն է, և որ նրա տարածքը, իբր, զուրկ է քաղաքական որևէ սահմանից»[22]:

Պատմության մեկ այլ կեղծարար՝ Է. Կարալը, իր «Օսմանյան պատմություն» բազմահատոր աշխատության մեջ հայ ժողովրդի ազատագրական պայքարի դրսևորումները որակում է որպես եվրոպական քաղաքականության և իմպերիալիզմի հրահրումների արդյունք: «Պճնվելով քեմալականների ժամանակաշրջանի քաղաքական դարձվածներով,- գրում է Մ. Ներսիսյանը,- Կարալը նույնացնում է միջազգային իմպերիալիզմը և հայ ազատագրական շարժումները»[23]: Ակադեմիկոսն այստեղ նկատում է մի բնորոշ հանգամանք՝ թուրք ժամանակակից բոլոր պատմաբաններն Օսմանյան Թուրքիան համարում են միջազգային իմպերիալիզմի զոհ, իսկ արևմտահայությանը՝ դրա հինգերորդ զորասյուն:

---

[21] *ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 253, թ. 65, նաև գ. 773, թ. 17,* ***Ներսիսյան Մ.,*** *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 310-311:*

[22] *ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 253, թ. 21,* ***Ներսիսյան Մ.****, Պատմության կեղծարարները, էջ 218:*

[23] *ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 115, թ. 89, նաև* ***Ներսիսյան Մ.****, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 311:*

Վերոգրյալ հեղինակներին է համերաշխում Բ. Շիմշիրը «Հայկական հարցը 1774-2005 թվականներին» աշխատության մեջ[24]: Նա գրում է, որ թուրքերն ավելի ծանր վիճակում էին գտնվում, քան հայերը, որոնք դժգոհության առիթ չեն ունեցել և օգտվել են լայն իրավունքներից: Եթե 1880-ական թթ. հայերը դիմել են խռովությունների, ապա մեղավորը ստեղծված «կոմիտեներն» են, որոնց հրահրումով ժողովուրդը դուրս է եկել պայքարի: Ճշմարտությունը զանց անելով՝ նա հայկական շարժումները համարում է «Արևելյան Անատոլիայում անգլո-ռուսական մրցակցության… գործոն», մեծ տերությունները «կեղծ հույսերով» էին կերակրել այդ շարժումների մասնակիցներին[25]: Ինչպես Մ. Ներսիսյանն է նկատում, նախապես մշակված այս տեսակետով է Շիմշիրը մեկնաբանում 1879 թ. թուրքերի դեմ զեյթունցիների ընդվզումները՝ մեղքը բարդելով անգլիական դիվանագիտության վրա, որի ճնշմամբ, իբր, վիժեցվել է Զեյթուն ուղարկված օսմանյան հանձնաժողովի գործունեությունը:

Պատմությունը խեղաթյուրելու ևս մի փորձ է նկատում Մ. Ներսիսյանը Զ. Դանիշմանի «Սուլթան Աբդուլ Համիդ Խան Առաջին» գրքում, որտեղ հեղինակը հայ ժողովրդին մեղադրում է անհավատարմության մեջ: Նա հայերի երկրագործությամբ ու առևտրով ազատ զբաղվելը համարում է օսմանյան պետության մեծահոգության և ներողամտության շնորհ, ուրեմն և ազատագրական շարժման համար հիմքեր չկային, որովհետև քրիստոնյաներն ավելի լավ վիճակում էին, քան մահմեդականները[26]:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարը ժխտելու առավել մերկապարանոց և հարձակողական ձև է ընտրել թուրք պատմաբան Ի. Օզգայան: «Հայ ժողովուրդը և թուրքերին հարստահարելու փորձեր» գրքում, այլևս չբավարարվելով շարժումն օտար պետությունների կողմից հրահրված լինելու ավանդական կեղծիքով, իր կյանքը, գույքը, պատիվը պահպանելու համար ազատագրական պայքարի դուրս եկած հայ ժողովրդին նա մեղադրում է ահաբեկչական գործողությունների, այն է՝ օսմանյան պետությունը թուլացնելու, այնուհետև թուրք ժողովրդին ոչնչացնելու մեջ: Կեղծարարության սահման չճանաչող հեղինակը, այդպիսով դահիճն ու զոհը շփոթում է իրար հետ: Մ. Ներսիսյանը մերկացնում է այդ սուտը հենց հեղինակի հորինած և ներկայացրած վիճակագրական տվյալներով: Ըստ կեղծարարի, մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Թուրքիայում ապրում էր 200.000 հայ: Այս կապակցությամբ միանգամայն տեղին է Մ. Ներսիսյանի հարցադրումը. «Ինչպե՞ս կարող էր այդքան փոքրաթիվ հանրությունը սպառնալ բազմամիլիոն թուրք ժողովրդի և նրա պետության

---

[24] ***Şimşir Bilăl N.*** *Ermeni meselesi 1774-2005, Ankara, 2006.*

[25] *Նույն տեղում, էջ 50:*

[26] *ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 115, թ. 90,* ***Ներսիսյան Մ.****, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 312-313:*

գոյությանը»[27]: Պատասխանը միանգամայն պարզ է. դարձյալ նույն սուտն ու կեղծիքը:

Մեկ այլ թուրք պատմաբան՝ Ա. Դելիորմանը ևս, հայ ազատագրական պայքարը նենգափոխելով և արժեզրկելով, փորձում է այն վերագրել, մի կողմից, օտար պետությունների սադրիչ գործողություններին, մյուս կողմից, կոմիտեականների գործունեությանը: Մ. Ներսիսյանն այդ մասին հստակ գրում է. «Հայերի ազատագրական շարժումները արժեզրկելու, եվրոպական ու ռուսական «քաղաքականության գործիք» դառնալու, թուրքերի հանդեպ «երախտամոռ լինելու» ակնհայտ կեղծիքով են հագեցած թուրքական շատ հեղինակների աշխատությունները: Որպես կանոն, այս բոլոր հեղինակներին ընդհանուր է «հավատարիմ միլեթի» ակնհայտորեն կեղծ և ստոր պատկերացումը, որից շեղված հայերը հետագայում, օսմանյան պետության արտաքին թշնամիների թելադրանքով, պետք է երախտամոռ «ոտնձգություններ» անեին «հայրախնամ» թուրքական պետության դեմ»[28]: Շարունակելով իր միտքը՝ Մ. Ներսիսյանը հիմնավորում է նրանց՝ կեղծիքը կեղծիքով քողարկելու միտումը: Այսինքն՝ պատմության կեղծարարները փորձում են իրենց աշխատություններում ցույց տալ միայն դրանց «փաստագրական» արժեքը, իրականում այն հարմարեցնելով հայերի «բարեհպատակության», Թուրքիայի հանդուրժող ու ներողամիտ քաղաքականության վերաբերյալ նույնքան կեղծ ու շինծու դրույթին, ըստ որի՝ մինչև XIX դ. վերջը հայերի մտքով չէր անցնում պայքարել օսմանյան պետության դեմ: Նա ցավով է նշում, որ պատմության նենգափոխումները շարունակվում են նաև մեր օրերում, թուրքական պատմագիտությունը, ելնելով իր պետության քաղաքականությունից, առաջնորդվում է հայտնի դարձվածքով՝ «Ոչ հինն է մոռանում և ոչ էլ սովորում է նորը», և ոչ մի ընդհանուր բան չունի գիտական հետազոտության սկզբունքների հետ:

Մանրամասն վերլուծելով և ամփոփելով պատմության կեղծարարների տեսությունները՝ Մ. Ներսիսյանն առանձնացնում է նրանց առաջ քաշած երեք հիմնական դրույթներ և առանձին-առանձին քննարկում դրանք:

1. Օսմանյան կայսրության մեջ հայ ժողովուրդը չի ենթարկվել ո՛չ ազգային ճնշման և ո՛չ էլ սոցիալական հարստահարության:

Մ. Ներսիսյանը նշում է, որ բազմաթիվ փաստերը, անհերքելի ապացույցները խոսում են արևմտահայության ծանր վիճակի մասին. բարբարոսությունը, թալանը, ավերը, կոտորածը, ջարդն ու կողոպուտը մշտապես ուղեկցել են արևմտահայությանը: Թուրքական վայրագությունն իր

---

[27] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 115, թ. 92, **Ներսիսյան Մ.,** Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 313:

[28] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 115, թ. 93, **Ներսիսյան Մ.**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 313-314:

դեմքը ցույց է տվել նաև Սերբիայում, Հունաստանում, Բուլղարիայում և հրով ու սրով նվաճված մյուս երկրներում[29]:

Պատմաբանը վկայակոչում է ռուս նշանավոր գրող և հրապարակախոս Ն. Չերնիշևսկու միտքն այն մասին, որ «...Բալկանյան թերակղզում ուղղափառներից (հույներ, սերբեր) հետզհետե խլելով մի շրջանը մյուսի հետևից՝ թուրքերը մտածում էին ուղղակի այդ շրջանների զավթման, թալանի, հարկերի և տիրակալելու մասին», որ «թուրքերը նվաճումներ կատարելով հետապնդում էին հենց ավար և զավթումներ»[30]: Այս առումով նշենք, որ Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ» փաստառատ մենագրությունը արևմտահայության ազգային և սոցիալական ճնշումների վերաբերյալ մի մեծ համայնապատկեր է, որի ճշմարտացիությունն անվիճելի է: Իսկ թուրք պատմաբանների վերոնշյալ դրույթը հեղինակի խոսքերով՝ այնքան ակնառու ստախոսություն է, որ անգամ ավելորդ է բանավիճել:

2. Դժգոհ չլինելով թուրքական պետությունից, արևմտահայությունը չի մտածել ազգային-ազատագրական պայքարի մասին:

Դարձյալ պատմական էքսկուրս կատարելով դեպի նախորդ ժամանակները, երբ ազատագրական պայքարի բազմաթիվ փորձեր են կատարվել, Մ. Ներսիսյանը ներկայացնում է շատ օրինակներ՝ փաստելով, որ այդ դրույթը նույնպես հեռու է պատմական իրողությունից: Այսպես, պատմաբանը վկայակոչում է 1547 թ. Էջմիածնում, 1562 թ. Սեբաստիա քաղաքում տեղի ունեցած գաղտնի ժողովների որոշումները: Հայ ժողովրդին պարսկական ու թուրքական տիրապետությունից ազատագրելու համար պատվիրակություններ էին գնում Արևմուտք: Այդ կապակցությամբ նա հիշեցնում է 1672 թ. Բիթլիս քաղաքից Փարիզ ժամանած հայ վաճառական Խոջա Մուրադի գրավոր դիմումը Լյուդովիկոս XIV-ին՝ հայ ժողովրդին թուրքական լծից ազատագրելու խնդրանքով[31]: Մ. Ներսիսյանը նշում է նաև XVII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման գործիչներ կաթողիկոս Հ. Ջուղայեցու, Ի. Օրու դիմումները եվրոպական և ռուսական կառավարություններին՝ նույն խնդրանքով:

Բացի այդ խնդրագրերից, հայ ժողովուրդը մշտապես զինված պայքար է մղել իր ազատագրության համար: Հենց XVIII դ. 20-ական թթ. կռիվները վկայում են հայ ժողովրդի ազատագրական պայքարի մասին, ինչպես օրինակ, 1724 թ. Երևանի հերոսական դիմադրությունը, Ղարաբաղի, Սյունիքի հայ գյուղացիության խիզախ մարտերը և փայլուն հաղթանակները

---

[29] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 115, թ. 95, **Ներսիսյան Մ.**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 316:

[30] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 27 **Ներսիսյան Մ.**, Պատմության կեղծարարները, էջ 10-11, **նույնի**՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 28:

[31] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 115, թ. 96, **Ներսիսյան Մ.**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 316:

թուրքական նվաճողների դեմ Ական Յուզբաշու, կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի, Դավիթ Բեկի, Մխիթար սպարապետի և մյուսների գլխավորությամբ 1725-1728 թթ. ու հետագա տարիներին[32]: «Ինչպես տեսնում ենք,- գրում է Մ. Ներսիսյանը,- հայերը, հակառակ թուրք պատմաբանների պնդումների, գտնվել են խիստ ծանր վիճակում և բազմիցս փորձեր են արել ազատվելու բարբարոս, «մարդակեր ու խաչահալած» սուլթանների ու փաշաների լծից»[33]:

3. Հայերի՝ 1880-1890-ական թթ. և հետագա տարիների «խռովությունները» տեղի են ունեցել հայկական անպատասխանատու «կոմիտեների» ու մի քանի պետությունների (գլխավորապես Ռուսաստանի և Անգլիայի) գործակալների դրդմամբ:

Մ. Ներսիսյանը հիշեցնում է Զեյթունի 1862 թ. ժողովրդական ապստամբությունը, որի ժամանակ գոյություն չի ունեցել ոչ մի «կոմիտե»: Բացի դրանից, այդ շարժումն ուներ ինքնապաշտպանական բնույթ, իսկ դա նշանակում է, որ արևմտահայությունը փորձում էր պահպանել իր գոյությունը, հետևաբար, եթե զենքի է դիմել, ապա միայն ֆիզիկական բնաջնջման չենթարկվելու համար: Պատմաբանի դիպուկ արտահայտությամբ, «Պատմության կեղծարարները հաշվի չեն առնում Արևմտյան Հայաստանում ստեղծված այդ իրադրությունը և փորձում են հայերի «խռովությունների» պատճառները փնտրել ոչ թե ժողովրդի ծանր, օրհասական դրության, այլ միայն հայրենասիրական կոմիտեների գործունեության մեջ: Ակնհայտ է պատմության թուրքական խմբագրման փորձը»[34]:

Իսկ ինչ վերաբերում է ազատագրական շարժումը օտար պետությունների՝ Ռուսաստանի և Անգլիայի կողմից, իբր, հրահրվելու վարկածին, Մ. Ներսիսյանը հիմնավորում է Ռուսաստանի և թուրքական բռնակալության տակ գտնվող ժողովուրդների շահերը համընկնելու իրողությունը: Ցարական կառավարությունը, անշուշտ, ելնելով իր շահերից, հովանավորել է Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ժողովուրդներին: Նրա օգնությամբ բալկանյան ժողովուրդները ստացան անկախություն: Իսկ ինչու դա պիտի չլիներ արևմտահայության նկատմամբ, «որի հաջող իրականացման դեպքում Արևմտյան Հայաստանի խնդիրը կստանար քիչ թե շատ բարեհաջող լուծում»[35]:

Պատմության կեղծարարները մի ամբողջ ժողովրդի ազատագրական պայքարը որակում են դավադրություն, որն արագացնում էր օսմանյան

---

[32] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 115, թ. 98, **Ներսիսյան Մ.,** Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 317:

[33] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 115, թ.100, **Ներսիսյան Մ.**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 319:

[34] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 115, թ.101, **Ներսիսյան Մ.**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 320:

[35] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 115, թ. 102, նաև **Ներսիսյան Մ.,** Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 320-321:

պետության քայքայումը: Բայց մի՞թե այդ տառապյալ ժողովուրդն իրավունք չուներ պայքարելու իր ազատության ու անկախության համար: Յուրաքանչյուր արժանապատիվ ազգի սրբազան պարտականությունն է ոտքի կանգնել իր կյանքը, գույքն ու պատիվը փրկելու համար: ՈՒստի շատ բնական է և օրինաչափ, որ աշխարհի առաջավոր մարդկությունը պաշտպանել է ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարը: Այդ առնչությամբ Մ. Ներսիսյանը վկայակոչում է Ջ. Բայրոնին, Ֆ. Շիլլերին, Ա. Պուշկինին, դեկաբրիստներին, Վ. Հյուգոյին և այլոց:

Պատմության կեղծարարները պնդում են, որ ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարը դարձավ օսմանյան կայսրության անկման պատճառներից մեկը, ուստի ամեն կերպ վատաբանում են այն: Բայց այդ բռնապետության կործանումը եղել է առաջադիմական երևույթ և նպաստել հասարակության առաջընթացին: Չէ՞ որ օսմանյան կայսրության փլատակների վրա ստեղծվեցին սերբերի, հույների, բուլղարների և արաբների ազգային պետությունները: «Այսպիսով, հակառակ պատմության կեղծարարների շինծու տեսակետների, Օսմանյան կայսրության դեմ ուղղված բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի, ազատագրական պայքարն, անկասկած, եղել է միանգամայն արդարացի ու առաջադիմական»,- եզրակացնում է Մ. Ներսիսյանը[36]:

Նա ընդգծում է այն հանգամանքը, որ պատմության կեղծարարները, չսահմանափակվելով նոր պատմության հարցերի խեղաթյուրմամբ, նույն ջանասիրությամբ փորձում են աղավաղել նաև հայ ժողովրդի հին և միջին դարերի պատմությունը: Սակայն նրանց պատիր և բացարձակ անհիմն տեսությունները քանիցս մերկացվել են պատմագիտական մի շարք աշխատություններում[37]:

Հետևաբար, արևմտահայության ազգային-ազատագրական շարժումը ստվերող՝ պատմության կեղծարարների մերկացումն ունի գիտատեսական և գործնական կարևոր նշանակություն:

МКРТЫЧ НЕРСИСЯН ПРОТИВ ФАЛЬСИФИКАТОРОВ ИСТОРИИ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ

---

[36] *ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 115, թ. 106, նաև* ***Ներսիսյան Մ.****, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը…, էջ 320,* ***նույնի****՝ Հայ ազգային-ազատագրական շարժումը օսմանյան բռնապետության դեմ և պատմության կեղծարարները (ՊԲՀ, 1984, № 3, էջ 19):*

[37] ***Зулалян М.*** *Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Е., 1970,* ***նույնի****՝ Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ, Ե., 1995,* ***Ներսիսյան Մ., Խառատյան Ա.,*** *Միջազգային հասարակական կարծիքը արևմտահայության ցեղասպանության մասին (ՊԲՀ, 1986, № 1, էջ 71-84 և այլն):*

МЕЛКОНЯН Э. В.

Резюме

Как в прошлом, так и в наши дни турецкие историки пытаются фальсифицировать историю армянского национально-освободительного движения, характеризуя его как заговор против османских властей, явившийся одной из причин упадка Османской империи. Борьба западных армян носила самооборонительный характер и была вызвана крайне тяжелым положением армян, подвергавшихся гнету и притеснениям.

Турецкие фальсификаторы пытались идеализировать историю своего государства, утверждая, что народы Османской империи пользовались всеми правами. В своих многочисленных трудах академик М. Нерсисян разоблачает турецких фальсификаторов, пытающихся очернить армянское освободительное движение, вызванное к жизни объективными причинами.

MKRTICH NERSISYAN AGAINST THE FALSIFIERS OF HISTORY OF THE ARMENIAN NATIONAL LIBERATION MOVEMENT

E. MELKONYAN

Abstract

The Turkish historians have been trying to falsify history of the Armenian National Liberation Movement since the past. They also try to humiliate the struggle, which was spontaneous, without any provocation, and was very natural and logical for the Western Armenians, who were hopeless and had no other way out. It was a self-defense, a measure of protection and a response to the sufferings they had borne.

Considering that the people in their country enjoyed a secure life and a wide range of rights and had no reason to rise in rebellion against the Ottoman Empire, the Turkish falsifiers tried to idealize the history of their own country. In his numerous works academician Nersisyan exposes the true nature of their views that besmirch the Armenian National Liberation Movement.

By means of analyses and convincing interpretation of facts, M. Nersisyan firmly refutes the Turkish falsifiers' anti-scientific hypotheses based neither on facts nor on the truth.